

7567

110


329.14

U-78

1919

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՍՕՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿՆԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ
ԾՐՁԱՆԻՆ ՀԱՄԱՐ



(Վեբաֆլենում 32-րդ Պատգամատոքան Ժողովէ)

ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

1919


Վ 2001

329.14
U-78

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԾՐՁԱՆԻՆ ՀԱՄԱՐ



(Վերաբենուած 32-րդ Պատգամատրական Ժողովէն)

ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

1919

15324

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՍՕՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿ-
ՑՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍՆԱ-
ՃԻՒՂԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1 — Ամեն անոնք, (առանց սեփի խըս-
րութեան), որոնք տասն եւ ութը տարին լրացու-
ցած են եւ կընդունին Սօցիալ Դէմոկրատ Հնչակեան
Կուսակցութեան սկզբունքները, կուխտեն հաւա-
տարիմ մնալ անոր Դրօշին եւ կը կատարեն Սօցիալ
Դէմոկրատ Հնչակեան Զինուորի մը յատուկ բոլոր
պարտականութիւնները, կընդունուին անդամ Սօ-
ցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան :



1679-88

80407-ամ

30Դ. 2.— Իւրաքանչիւր նորեկ Անդամ (այր թէ կին), Մասնաճիւղի ընկերներու ներկայութեան պարտաւոր է կատարել իր երդումը:

«Կուխտեմ Հայ Ազատազրութեան Սրբազն Պատմին համար ինկող նահատակիներու անունով, հաւասարիմ մնալ Սօցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կանոնագրի բռնը պահանջներուն և Սօցիալ Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Մրագրի մէս մի յօդաւածին իրագործումին համար տրամադրել Փիզիքական, մտաւորական ու քարոյական ոչժերս եւ զործնականացնել այդ սկզբունքները իմ կետումին մէջ»:

30Դ. 3.— Իւրաքանչիւր Անդամ պարտաւոր է իրեւ մուտք՝ վճարել 1 տոլար կամ աւելի, եւ այսուհետեւ 1 տոլար անդամավճար: Կիներ եւ Օրբորդներ՝ 25 սէնթ մուտք եւ 10 սէնթ ամսական մէարելու են: (*)

30Դ. 4.— Իւրաքանչիւր նորեկ Անդամ պարտաւոր է ներկայացնել Մասնաճիւղի Անդամներէն՝ առնուազն երկու հոգի, իրեւ երաշխաւորութիւնի ամսնիւ վարուց եւ անձնուէր հոււատարմութեան:

30Դ. 5.— Իւրաքանչիւր Սօցիալ Դէմոկրատ

(*) Մասնաճիւղը անդամավճարներէն հաւաքուած գումարին մէկ երբորդ մասը կը պահէ իր գանձին մէջ՝ տեղական ծախքերու համար. իսկ մնացնալ երկու երբորդ մասը՝ պարտաւոր է զըրկել կուտը. Վարիչ Մարմնին:

Հնչակեան Անդամ կէտ առ կէտ պարտաւոր է կատարել այն բոլոր պարտականութիւնները, որոնք ընդգծուած են ներկայ Կանոնագրի մէջ:

30Դ. 6.— Իւրաքանչիւր Անդամ պարտաւոր է անպատճառ ներկայ գտնուիլ Անդամական Ժողովներուն. Հակառակ դէպէին՝ պարտաւոր է յաջորդ Ժողովին ներկայացնել իր բանաւոր պատճառները:

30Դ. 7.— Անդամ մը, Անդամական Ժողովին առաջին բացակայութեան՝ կազդարարուի, երկրորդին՝ կը յանդիմանուի, իսկ երրորդին՝ կենթարկուի տուգանքի:

30Դ. 8.— Անդամանապահ ընկեր մը, կը յանդիմանուի ընկերներու ներկայացներէն եւ կը պրկուի իր բոլոր իրաւասութիւններէն երեք ամիս՝ Կատարելով միանդամացն իր բոլոր պարտականութիւնները:

30Դ. 9.— Անդամ մը, որ առանց յարգելի պատճառներու (Հիւանդութիւն, անզործութիւն, չքաւորութիւն), երեք ամիս չէ վճարած իր անդամավճարները, կը դադրի Մասնաճիւղի անդամականութիւններն:

30Դ. 10.— Այս ընկերը, որ կուսակցութեանս սկզբունքներուն եւ գծուած տակտիկային հակառակ կը գործէ ու կասակծելի, խառնակիչ, եւ անդամապահ արարքներու մէջ կը գտնուի, նախ՝ կազդարարուի Շրջանային Գործադիր Յանձնախումբի կողմէն, եւ երբ ազդարարութիւնը տղարդիւն մնայ, կեղը.

Վարիչ Մարմնի վերաքննութենէն յետոց^ն կարտաքուի Կուսակցութենէն եւ մջաբերականով կը հաղորդուի Մասնաճիւղերուն ու կեղրոնական Վարչութեան :

Յօն. 11. — Ամեն Անդամի վրայ պարտք կը դրուի «Երիտասարդ Հայաստան»-ի բաժանորդ գլուխիլ :

Յօն. 12. — Իւրաքանչիւր Անդամ պարտաւոր է խիստ գաղտնապահ լինիլ Կունակցութեանս ներքին գործերու վերաբերմամբ :

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօն. 13. — Ա. — Ազդարարում : Բ. — Յանդիմանութիւն : Գ. — Տուգանք : Դ. — Պաշտօնազրկում : Ե. — Կախակայում : Զ. — Արտաքսում : Պատիժը համեմատական կը լլայ գործուած յանցանքին : Պատիժը կը տնօրինուի պատկանեալ Մարմիններու կողմէ :

ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօն. 14. — Հինգ ընկերուներէ եւ ընկերունեիներէ բաղկացած Մասնաճիւղ մը օրինաւոր կը ճանչցուի : (Այն տեղերը, ուր վերոյիշեալ թիւը ներկայացնող Անդամներ կը պակսին եւ երեք Անդամէ պակաս չեն, կը կոչուին Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Խումբ, որ ոչ կնիք կունենան եւ ոչ ալ Պաշտօնական գրութիւն կը դրկուի . այլ Գործադիր Յանձնախումբը իր հարկ տեսած հաղորդակցութիւնը միայն կը կատարէ) :

Յօն. 15. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ կը նարէ վարչութիւն մը բաղկացած 3—5 անդամներէ :

Յօն. 16. — Մասնաճիւղի վարչութիւնը անդամական ժողովներու որոշումները եւ անոր ընթացիկ գործերը լրիւ գործադրող մարմին է, որը իր մէջէն կը նարէ Դիւանը :

Յօն. 17. — Մասնաճիւղի վարչութեան պաշտօնավարութեան շրջանը կը տեւէ 6 ամիս : Վարչութիւնը վերընտրելի է՝ եթէ արժանի է :

Յօն. 18. — Մասնաճիւղի վարչութիւնը պարտաւոր է իրեն եկած պաշտօնական գրութիւնները միայն ներկայացնել Անդամական ժողովին :

Յօն. 19. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ իր ներքին գործերը կարգադրելու ազատ իրաւունք ունի :

Յօն. 20. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտաւոր է 15 օրը անզամ մը Անդամական ժողովը գումարել :

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօն. 20. — Անդամական ժողովներու որոշումները չեն գործադրող վարչութիւնները՝ բեկաննելի են :

— 8 —

ՅօԴ. 22. — Անդամական ժողովը Մասնաճիւ-
ղի վերաբերեալ ընթացիկ գործերու մասին որո-
շում տուող պաշտօնական մարմին է, որ կազմուած
է տեղական ընկերներէ եւ ընկերուհիներէ:

ՅօԴ. 25. — Անդամական ժողովի բացումը կը
կատարուի նախորդ ժողովի արձանագրութիւնը կար-
դացուելով եւ վաւերացուելով:

ՅօԴ. 23. — Ընկերուհիներ կարող են եւ եթէ
կուգեն առանձին կը գումարեն իրենց ժողովները
որպէս ուրուն Մասնաճիւղ, եթէ օրինական թիւը կը
լրացնեն, առաջնորդուելով սոյն կանոնագրու-
թեամբ:

ՅօԴ. 24. — Անդամական ժողովներու օրակար-
ը կը պատրաստէ Վարչութիւնը, սակայն ժողովի
ժումանակ անդամներու կողմէն ալ կարող են հար-
ցեր առաջարկուիլ:

ՅօԴ. 26. — Վարչութիւնը պարտաւոր է պահել
Անդամական ժողովներու արձանագրութիւնը:

ՅօԴ. 27. — Մասնաճիւղը ազատ են իրենց
անդամական ժողովներուն համար օրուան դիւան
մը ընտրել, որը արձանագրութիւնը կազմելով կը
յանձնէ Մասնաճիւղի վարչութեան:

ՅօԴ. 28. — Մասնաճիւղի վարչութեան Ատե-
նապետը, Ատենադպիրը, Գանձապահը եւ Կնքա-
պահը այն պաշտօնը ունին՝ ինչ որ ունին Կեղըոնա-
կան Վարիչ Մարմինը (Տես Յօդուած 67):

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅօԴ. 29. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ (արանց
թէ կանանց) ուրիշ քաղաք մը փոխադրուող իր մէջ
անդամին պէտք է յանձնէ յանձնարարական մը, որը
ներկայացնէ իր նոր գնացած տեղի Մասնաճիւղի
վարչութեան:

ՅօԴ. 30. — Բողոք նեկայացուելիք կուսակցու-
թեանս օրինական Մարմիններն են, 1. Մասնաճիւ-
ղի վարչութիւն, 2. Անդամական ժողով, 3. Շրջ. Գործ.
Յանձնախումբ, 4. Շրջանակալին ժողով, 5. Կեդր. Վարիչ Մարմին, 6. Ամերիկա-
կի Շրջ. Ընդ. Պատգ. ժողով, 7. Կեդր. Վարչու-
թիւն, 8. Ընդհ. Պատգ. ժողով:

Բողոքը պիտի մնայ միայն կուսակցական օրի-
նական սահմանների մէջ. Հակառակը կը լինի կու-
սակցադաւութիւն: Ենթականները արժանի արտաք-
սումի:

ՅօԴ. 31. — Իւրաքանչիւր անդամ իրաւունք
ունի բողոքել թէ՛ Վարչութեան եւ թէ՛ Անդամական
ժողովի պազօրինի արարքներուն դէմ՝ Յօդ. 30-ի
արամագրութեան համաձայն:

ՅօԴ. 32. — Մասնաճիւղի մը վարչութեան կամ
պարզ անդամներէն մէկին հրաժարման պարագա-
ցն, գրաւոր հրաժարականը պէտք է քննուի Անդա-
մական ժողովին մէջ եւ ըստ այնմ կարգադրութիւն
ըլլայ:

Յ0Դ. 33. — Մասնաճիւղ մը երբ նկատէ իր Վարչութեան ուեւէ մէկ զեղծումը, իրաւունք ունի իսկոց հրաժարեցնել եւ ընտրել նորը, տեղեկազբ-րելով Շրջ. Գործ. Յանձնախումբին եւ ապա Կեդր. Վարիչ Մարմնոյն:

Յ0Դ. 34. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ պար-տաւոր է իր նորեկ անդամի լաւելումը յայտնել Շրջ. Գործ. Յանձնախումբին եւ Կեդր. Վարիչ Մարմնոյն:

Յ0Դ. 35. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ պար-տաւոր է իր հանգանակած գումարը նոյնութեամբ դրկել Կեդր. Վարիչ Մարմնին եւ տեղեկացնել Շրջ. Գործ. Յանձնախումբին:

Յ0Դ. 36. — Մասնաճիւղ մը իր ընթացիկ գոր-ծերու համար պահանջուած ծախքերը կը կատարէ իր գանձարանէն:

Յ0Դ. 37. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ պար-տաւոր է ստանձնել «Երիտասարդ Հայաստան»ի գործակալութիւնը՝ պահելով անոր առանձին հա-շիւները:

Յ0Դ. 38. — Մասնաճիւղեր եւ ընկերներ իրա-ւունք ունին հրատարակել թուուցիկներ, շրջաբերա-կաններ, Կեդր. Վարիչ Մարմնոյ հաւանութեան են-թարկելէ յետոյ միայն Եթէ Կեդր. Վ. Մարմնը իր հա-ւանութիւնը չի տայ, պարտաւոր է իր գրաւոր պատ-ճառաբանութիւնները ներկայացնել ամսուան մը ընթացքին եւ երբ Մասնաճիւղը այդ պատճառաբա-

նութիւնները անբաւական կը սեպէ, իր փաստերով ետ կը դարձնէ Կեդր. Վարիչ Մարմնին: Եթէք անդամ իրարու իրենց պատճառաբանութիւնները ներկայա-ցնելէն լետով, վերջին պահուն Կեդր. Վարիչ Մար-մնը պարտաւոր է առնել ինդրոյ ներքեւ եղած շըր-ջաբերականը, ինքը տպել եւ պատճառաբանութիւն-ներով միասին ցրուել Մասնաճիւղերուն:

Յ0Դ. 39. — Մասնաճիւղերը պարտաւոր են ի-րենց հրաւիրած ատենախօսներուն օրինաւոր ծախ-քերը հոգալ:

Յ0Դ. 40. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ ազաս իրաւունք ունի թելադրութիւններ ընել Շրջ. Գործ. Յանձնախումբին եւ Կեդր. Վարիչ Մարմնոյն

Յ0Դ. 41. — Մասնաճիւղ մը, առանց Կեդր. Վա-րիչ Մարմնի զիտութեան եւ հաւանութեան, իրա-ւունք չունի Կուսակցութեան սկզբունքային եւ ընդ-հանուր ինդիրներու նկատմամբ՝ բանակցիլ ուրիշ կու-սակցութեանց պաշտօնական մարմիններու հետ:

Յ0Դ. 42. — Իւրաքանչիւր Մասնաճիւղ պարտա-ւոր է՝ իր պատգամաւորի հետ՝ իր մէկ տարուան բա-րոյական եւ նիւթական հաշուեկշիուը դրկել Պատգա-մաւորական ժողովին:

Յ0Դ. 43. — Մասնաճիւղերը Շրջանալին Պատ-ճողովին ձայն ունին հետեւեալ համեմատութեամբ 5էն 30՝ մէկ ձայն. 31-50 երկու ձայն ու անկից յետոյ իւրաքանչիւր 50 մէկ ձայն (51-ը 3 ձայն 101-ը չորս ձայն եւն.):

— 12 —

Յ0Դ. 44. — Առանց պաշտօնական անձերու և մարմիններու ստացագործի՝ եղած բոլոր դրամական գործերը անվաւեր են:

Յ0Դ. 45. — Մասնաճիւղ մը երբ իր մէկ տարուան նիւթական և բարուական պարտականութեան մէջ մեծապէս թերացած կը լինի, եւ կամ բնաւ կատարած չի լինի, (անդամավճար, պիտուծ եւ ազն) Պատգամաւորական ժողովին մէջ ձայն ունենալէ կը զրկուի, ի բաց առեալ, երբ թերացուամի պատճառները՝ լւտ քննութեան՝ Պատգ. Ժողովը օրինաւոր կը գտնէ:

Յ0Դ. 46. — Լուծուած Մասնաճիւղերու գոչքերը կը մնան ընկերներու քով, իրեւ Ս. Դ. Հնչ. Խմբի, Եթէ Շրջ. Գործ. Յանձ. լւտ կեղը. Վարիչ Մարմնի կամ կեղը. Վարիչ Մարմինը յարմար կը տեսնէ:

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յ0Դ. 47. — Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնաճիւղերը տարին մէկ անդամ կունենան Պատգ. Ժողով, որը՝ Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնաճիւղերու Բարձրագոյն Մարմինն է և որը կզբաղի Մասնաճիւղերու վերաբերեալ բոլոր հարցերով:

Յ0Դ. 48. — Պատգ. Ժողովը կը բաղկանայ Ամերիկայի Ս. Դ. Հնչակեան Մասնաճիւղերու ընտած պատգամաւորներէն եւ Շրջ. Գործ. Յանձ-

նախումբերու մէկ մէկ ներկայացուցիչներէն, ինչպէս եւ կեղը. Վարիչ Մարմնի Դիւանէն:

Յ0Դ. 49. — Պատգ. Ժողովը օրինաւոր կը Համարուի՝ երբ հրաւիրուած Մասնաճիւղերու մէծամասնութիւնը ներկայ է, ինչպէս նաև ձայներու մէծամասնութիւնը:

Յ0Դ. 50. — Պատգ. Ժողովը իրաւունք ունի Ամերիկայի Շրջ. ամեն Մասնաճիւղի, Շրջ. Գործ. Յանձնախումբի եւ Վարիչ Մարմնի ներքին գործերուն միջամտել:

Յ0Դ. 51. — Պատգ. Ժողովի որոշումները պարտաւորիչ են միայն Ամերիկայի Ս. Դ. Հնչ. Մասնաճիւղերու, Շրջ. Գործ. Յանձնախումբերուն և կեղը. Վարիչ Մարմնոյն համար, կեղը. Վարչութեան վաւերացմամբ:

Յ0Դ. 52. — Պատգ. Ժողովի հրաւիրովը կեղը. Վարիչ Մարմինն է, որը պարտաւոր է Պատգ. Ժողովի գումարման տեղն ու ժամանակը մէկ ամիս առաջ հազորգել Մասնաճիւղերուն ուղարկելով անոնց նաև ժողովի օրակարգը, որուն վրայ մասնաճիւղերը կարող են աւելցնել իրենց կողմէ յարմար նկատուած ուրիշ հարցեր, նախապէս յայտնելով նաև իրենց մասնակցութիւնը:

Յ0Դ. 53. — Արտակարգ Պատգ. Ժողով կը գումարուի՝ երբ կեղը. Վարիչ Մարմինը անհրաժեշտ տեսնէ եւ ստանայ կանխաւ Մասնաճիւղերու մէծամասնութեան հաւանութիւնը:

Յ0Դ. 54. — Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք
է որ Մասնաճիւղի մը անդամակցած լինի:

Յ0Դ. 55. — Իւրաքանչիւր պատգամաւոր պար-
աւուր է անպատճառ, առնուազն, մէկ տարի անդա-
մակցած լինի Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան: բացի
այն Մասնաճիւղերէն որոնց կազմութիւնը վեց ամիս
է:

Յ0Դ. 56. — Մասնաճիւղ մը, բացի իր անդամէն,
կընայ պատգամաւոր ընտրել հեռաւոր մի ընկերոջ՝
նիւթական կամ այլ հանդամանքներու պատճառով:

Յ0Դ. 57. — Իւրաքանչիւր պատգամաւոր պար-
աւուր է իր Մասնաճիւղի կնիքովը կնքուած ու դի-
ւանի ստորագրութեամբը յանձնաբարական մը ու-
նենալ: Պատգամաւորները պիտի ընտրուին Անդա-
մական ժողովներ:

Յ0Դ. 58. — Պատգամաւոր մը Պատգ. Ժողովին
Երկու ձախէն աւելի չի կարող ներկայացնել:

Յ0Դ. 59. — Պատգ. Ժողովը կընտրէ իր պատ-
գամաւորներէն դիւան մը, որուն պաշտօնավարու—
թիւնը կը տեւէ մինչեւ նիստին վերջանալը եւ կընալ
վերընտրուիլ:

Յ0Դ. 60. — Պատգ. Ժողովին դիւանը պարտա-
ւոր է նիստերուն արձանագրութիւնը կազմել, բնա-
գիրը ստորագրուած բոլոր պատգամաւորներէն եւ
կնքուած տեղույն Մասնաճիւղէն կը չանձնէ Կեդր.
Վարիչ Մարմնուն. իսկ պատճէնը Կեդր. Վարիչ

Մարմնու կնիքով վաւերացուած պէտք է զրկել կեդր-
րոնական Վարչութեան վաւերացուելու համար, որ-
մէ լետոյ պէտք է ցրուել Մասնաճիւղերուն:

Յ0Դ. 61. — Պատգ. Ժողովի որոշումները կը
տրուին քուէարկութեան յարաբերական դրութիւ-
նով:

ԿԵԴՐՈՒՆԱԿԱՆ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

Յ0Դ. 62. — Պատգ. Ժողովը կընտրէ Կեդր.
Վարիչ Մարմին մը բաղկացած 5 անդամներէ, կըն-
տրէ նաև 5 թիկնածուներ յաջորդական կարգով,
որոնք իրաւունք կունենան Կեդր. Վարիչ Մարմնու
անդամներուն հիւանդութեանց, հրաժարման եւ
դժբաղդութեանց պարագալին յաջորդել անոնց տե-
ղը:

Յ0Դ. 63. — Կեդր. Վարիչ Մարմինը Ամերիկա-
կ Ս. Դ. Հնչ. Պատգ. Ժողովի որոշումները գոր-
ծադրող Մարմինն է: (*)

Յ0Դ. 64. — Յանուն Ամերիկակ Ս. Դ. Հնչ.

(*) ԾԱՆՈԹ. — Կեդր. Վարիչ Մարմնի անդամ-
ները միեւնոյն ժամանակ չեն կարող տեղւոյն Մաս-
նաճիւղին Վարչութեան եւ Շրջ. Գործ. Յանձնա-
խումբի անդամ ըլլալ:

Երջանի եղած պաշտօնական բոլոր յարաբերութիւնները հայ եւ օտար քաղաքական կուսակցութեանց հետ, կը կատարուի կեդր. Վարիչ Մարմնի միջոցով՝ նախօրօք Մասնաճիւղերու մեծամասնութեան հաւանութիւնը ստանալով կենսական խընդիրներու նկատմամբ միայն:

ՅՈՒ. 65. — Կեդր. Վարիչ Մարմնի անդամները անհատապէս եւ հաւաքարար պատասխանատու նամերիկայի Ս.Դ.Հնչ. Պատգ. Ժողովին իրենց բոլոր գործունէութեանց համար:

ՅՈՒ. 66. — Կեդր. Վարիչ Մարմնը իր բոլոր որոշումները կուտայ Վարչական Ժողովով:

ՅՈՒ. 67. — Կեդրոնական Վարիչ Մարմնը ինքը կը նաև մէջէն Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, Հաշուակալ, Դիւանապետ եւ Կնքապահ: Ատենապետի պաշտօնն է:

Ա. Ժողովներու արձանագրութիւնը կազմել Կեդր Վարիչ Մարմնի անդամները:

Բ. Եղած բոլոր որոշումներու անթերի գործադրութեանը հոկել:

Գ. Ստորագրել իր անունը՝ եղած բոլոր պաշտօնական գրութիւններուն տակ, Ատենադպիր հետ:

Ատենադպիրի պաշտօնն է:

Ա. Ժողովներու արձանագրութիւնը կազմել մասնաւոր տեարտկի մը մէջ:

Բ. Թղթակցութիւն կատարել:

Գ. Կեդր. Վարիչ Մարմնին եկած բոլոր գլու-

թիւնները ստանալ եւ պաշտօնակիցի մը ներկայութեամբ բանալ:

Դ. Ատենապետին հետ պաշտօնական պըութիւններու տակ ստորագրել:

Կնքապահի պաշտօնն է:

Պահպանէլ Կեդր. Վարիչ Մարմնի կնիքը եւ քըննել պաշտօնական բոլոր գրութիւնները: Առանց կը նիքի գրութիւն մը անպաշտօն կը համարուի: Գանձապահի պաշտօնն է:

Ա. Կեդր. Վարիչ Մարմնի անունով եկած բոլոր պամփերը ստանալ փոխարէն ստացագիր տալով:

Բ. Կեդր. Վարիչ Մարմնի ծախսերը հոգալ:

Գ. Ելեւմտական կանոնաւոր հաշուետոմար ունենալ, իր ձեռքով եղած ծախսերուն եւ դրկուած դրամներուն ընկալագրերը ներկայացնել Պատգամաւորական ժողովին:

Դ. Դրամական ամէն գործողութեանց տակ իր ստորագրութիւնը դնել:

ՅՈՒ. 68. — Կեդր. Վարիչ Մարմնը իր ամբողջ կազմով եւ կամ դիւանով (Ատենապետ, Ատենադպիր, Գանձապահ, պարտաւոր է Պատգմ. Ժողովին ներկայանալու, եւ որպէս հաւաքական Մարմնի մէկ քուէի իրաւունք ունի:

ՅՈՒ. 69. — Կեդր. Վարիչ Մարմնը պարտաւոր է ունենալ բոլոր Մասնաճիւղերու Վարչութեանց անունները:

ՅՈՒ. 70. — Մասնաճիւղերը իրենց տարեկան



անդամավճարներու եւ մուտքերու հասոյթին մէկ
երրորդէն իրենց տեղական ծախսերը հոգալէն լետոյ
25 տօլարէն աւելին կը իրկեն կեղբ։ Վարիչ Մարմ-
նոյն իր ծախքերուն համար, ինչպէս եւ «Երիտա-
սարդ Հայաստան»ի-բաժնեգիները եւ հասոյթը ամ
բողջութեամբ։

ՅՕԴ. 71. — Կեդր. Վարիչ Մարմինը իր ընթա-
ցիկ գործերը կարգադրելէն լետոյ՝ աւելցած դրամի
մէկ քառորդը իր տրամադրութեան տակ պահելով
մնացեալը պարտաւոր է զրկել Կեդրոնական Վար-
չութեան։

ՅՕԴ. 72. — Կեդր. Վարիչ Մարմինը իրը սկզբ-
րունք իրաւունք չունի Մասնաճիւղերու ներքին
գործերուն միջամտել, ի բաց առեալ հետեւեալ պա-
րագաներէ։

Ա. Երբ Մասնաճիւղի մը ընթացքը կը վտանգէ
կուսակցութեանս սկզբունքները, տակտիկան եւ կու-
սակցական շահերը։

Բ. Երբ Մասնաճիւղը միջամտութիւն կը ինդրէ։

Գ. Երբ Մասնաճիւղի մեծամասնութիւնը միջա-
մտութիւն կը պահանջէ։

ՅՕԴ. 73. — Կեդր. Վարիչ Մարմինը նորակազմ
Մասնաճիւղերու կազմութիւնը ի դիտութիւն կը
յախտարարէ Մասնաճիւղերուն եւ կը հաղորդէ
Կեդր. Վարչութեան, եւ անկէ վաւերացում կստա-
նալ։

ՅՕԴ. 74. — Կեդր. Վարիչ Մարմինը պարտաւոր

է ունենալ վիճակագրական տոմար մը, ուր արձանա-
գրուած պէտք է ըլլայ Մասնաճիւղերու անունները,
անդամներուն թիւը, անոնց անունները, տարիքը,
պարապմունքները (թէ անցեալ եւ թէ ներկայ),
ամուսնացած թէ՞ ամուրի, առողջ թէ՞ վատառողջ,
եւ ո՞ր տեղացի լինելը։

ՅՕԴ. 75. — Կեդր. Վարիչ Մարմնոյ պաշտօնա-
վարութեան շրջանը կը տեւէ մինչեւ յաջորդ Պատ-
գամաւորական ժողովը։

ՅՕԴ. 76. — Կեդր. Վարիչ Մարմնոյ պաշտօնա-
վարութեան ժամանակը դադրած կը համարուի՝ երբ
իրեն փոխարինող նոր Մարմինը մէջտեղ կուզայ։

ՅՕԴ. 77. — Կեդր. Վարիչ Մարմինը արխիւը կը
յանձնէ նորընտիր Մարմնոյն։ Մինչեւ որ նորընտիր
Մարմնի մը ընտրութիւնը տեղի չունենայ՝ Կեդր.
Վարիչ Մարմինը իր գոյութիւնը կը պահէ եւ ընթա-
ցիկ գործերը կը վարէ։

ՅՕԴ. 78. — Կեդր. Վարիչ Մարմինը ի ներկա-
ցութեան բոլոր պատգամաւորներու կը բանալ
Պատգ. Ժողովը եւ կը կատարէ պատգամաւորներու
վկաչագրերու նախնական քննութիւնը։

ՅՕԴ. 79. — Կեդր. Վարիչ Մարմինը լթէ առանց
ուեւէ բանաւոր պատգամառի թերանայ Պատգ. Ժողով
գումարել՝ Մասնաճիւղերը ազատ իրաւունք ունին,
փոխադարձ համաձայնութեամբ եւ ձախներու մեծա-
մասնութեամբ, առանց հրաւէրի սպասելու՝ գումա-
րել Պատգ. Ժողովը՝ իր որոշեալ տեղը։

80Դ. 80. — Կեդր. Վարիչ Մարմինը լուծուած
կը համարուի.

Ա. Երբ իր անդամներու թիւը երեքէն պակաս է :

Բ. Երբ Մասնաճիւղերու մեծամամութիւնը
կը պահանջէ Պատգ. Ժողով գումարելով ընտրու-
թիւն կատարել :

ԳՈՐԾԻՉՆԵՐ

80Դ. 81. — Ընկեր թէ ընկերուէի գործիչներ
Ամերիկայի Ա.Դ.Հնչակեան շրջանի պրօպագան-
դիստ ընկերներն են, որոնք կընտրուին Կեդր Վարիչ
Մարմնու կողմէն :

80Դ. 82. — Գործիչները Կեդր Վարիչ Մարմնէն
կստանան իրենց յատկացուած թոշակը (ամուրինե-
րը պէտք է ստանան 12—16 տոլար, ամուսնացեալ-
ները 15—20) :

80Դ. 83. — Գործիչները իրաւունք չունին ոեւէ
դրամական գանձում ընկել մասնաճիւղերէ եւ կամ
ընկերներէ՝ յանուն «Երիտասարդ Հայաստան»ի եւ
կամ Ա. Դ. Հնչ. Կուսակցութեան :

80Դ. 84. Գործիչները իրաւունք չունին ա-
ռանց Կեդր. Վարիչ Մարմնի գիտութեան եւ հաւա-
նութեան ոեւէ բանակցութիւն կամ կազմադրութիւն
ընկել Կուսակցութեանու անունով Հայ եւ օտար Կու-

սակցութեանց հետ :

80Դ. 85. — «Երիտասարդ Հայաստան»ի բոլոր
գոյքերը, Կեդր. Վարիչ Մարմնի արխիմերը, գրքե-
րլ, տպադրական մեքենաները, տառերը եւն. բո-
յորն ալ պէտք է մանրամասն թիւերով եւ իրենց ար-
ժէքներով ցուցակադրել առանձինն տոմարի մը մէջ,
որը ամէն պատզամաւորական ժողովի քննուելով,
կստորագրուի ու կը յանձնուի նորնտիր Կեդր. Վա-
րիչ Մարմնոյն :

80Դ. 86. — Շրջանակային ժողովները ամէն
Մասնաճիւղի կստարեալ իրաւունքը ըլլալով՝ ոեւէ
արգելքի ներքեւ պէտք չէ դրուի, որուն որոշումնե-
րը սոսկ թելաղբութիւններ կրնան ըլլալ Մասնա-
ճիւղերուն :

80Դ. 87. — Կեդր. Վարիչ Մարմինը ազատ է
ամէն ատեն խորհրդակցական ժողով գումարել,
Հրատապ հարցերու շուրջ՝ կանչել իր մօտ շրջան-
ներէն կարող ընկերներ եւ անոնց խորհուրդները ըս-
տանալ եւ որոշումներուն ինքը պատասխանատու
մնալ :

ՇՐՋԱՆԱՑԻՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

80Դ. 88. — Շրջ. Պատգ. Ժողովը իր շրջանի
շարձրագոյն ներկայացւցչական Մարմինն է :
Զուտ տեղական, Շրջանային խնդիրներու նկատ-
մամբ՝ նա բարձրագոյն օրէնտրական Մարմին է :

ՅօԴ. 89. — Շրջանային Պատգ. Ժողովը կը գումարուի տարին մէկ անդամ .

ՅօԴ. 90. — Շրջանային Պատգ. Ժողովին կը մասնակցին բացառապէս Շրջանի Մասնաճիւղերւ :

ՅօԴ. 91. — Շրջանային Պատգ. Ժողովին Շրջանի Մասնաճիւղերը կը մասնակցին համաձայն կուսակցութեան ներքին Կանոնագրի ընդհանուր տրամադրութեանց :

ՅօԴ. 92. — Շրջանային Պատգ. Ժողովը իրաւունք չունի Ամերիկակի Շրջանի Ընդհանուր հասոգամաւրական Ժողովի ուևէ որոշումները փոխելու իր Շրջանի նկատամամբ :

ՅօԴ. 93. — Շրջանային Պատգ. Ժողովը կը գումարուի Կեղրոնական Վարիչ Մարմնի գիտակցութեամբ :

ՅօԴ. 94. — Շրջ. Պատգ. Ժողովը իր նիստերը կը վարէ համաձայն Կուսակցութեանս ներքին Կանոնագրի ընդհանուր տրամադրութեանց :

ՅօԴ. 95. — Շրջ. Պատգ. Ժողովը իր նիստերուն մէջ իրաւունք ունի քննութեան առնել Շրջանի Մասնաճիւղերու բարուական եւ նիւթական հաշին ները՝ այդ մասին պէտք եղած արձանագրութիւններ կազմելով :

ՅօԴ. 96. — Շրջ. Պատգ. Ժողովը հաշուառու Մարմինն է իր Շրջանի Գործադիր Յանձնախումբին :

ՅօԴ. 97. — Շրջ. Պատգ. Ժողովը կը նիստերէ իր Շրջանի Գործադիր Յանձնախումբը : Բնտրութիւնները կը կատարուին համաձայն Կանոնագրի ընդհանուր տրամադրութեանց :

ՅօԴ. 98. — Շրջ. Պատգ. Ժողովը իր նիստերու արձանագրութենէն մէկ օրինակ կը յանձնէ նորընտիր Շրջ. Գործ. Յանձնախմբին, իսկ միւս օրինակը կուղարկէ Կեղրոնական Վարիչ Մարմնի՝ վաերացման եւ գործադրութեան համար :

ՅօԴ. 99. — Շրջ. Պատգ. Ժողովի նախաձեռնութիւնը կը պատկանի Կեդր. Վարիչ Մարմնին :

ՅօԴ. 100. — Եթէ Կեդր. Վարիչ Մարմինը թերանայ իր պարտականութեանց մէջ եւ Մասնաճիւղերու երկու երրորդը ցանկանան՝ կարող են նախաձեռնարկ ըլլալ Շրջ. Պատգ. Ժողովի Գումարման :

ՅօԴ. 101. — Շրջ. Պատգ. Ժողովը իրաւունք չունի Կուսակցութեանս ընդհանուր սկզբունքներու եւ տաքտիկայի ինդիբներով զրադուելու:

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՅօԴ. 102. — Շրջ. Գործ. Յանձնախումբը Շրջանային Պատգ. Ժողովի որոշումները գործադրութիւնասու Մարմինն է :

ՅօԴ. 103. — Շրջ. Գործադիր Յանձնախումբի

իրաւասութիւնը կը տարածուի միայն իր Շրջանի
Մասնաճիւղերու վրայ :

Յօդ. 104. — Շրջ. Գործադիր Յանձնախումբի
պաշտօնավարութեան չքջանը կը տեւէ ո՛չ աւելի
քան մէկ տարի, մինչեւ լաջորդ Շրջ. Պատգ. Ժո-
ղովը :

Յօդ. 105. — Շրջ. Գործադիր Յանձնախում-
բը կը բաղկանայ 3—5 անդամներէ :

Յօդ. 106. — Շրջ. Գործադիր Յանձնախում-
բը կրնորուի բացառապէս իր չքջանի Մասնաճիւ-
ղերէն :

Յօդ. 107. — Շրջ. Գործադիր Յանձնախում-
բի ընտրութեան համար, ինչպէս եւ Շրջանի Պատգ.
Ժողովի գործառնութեանց, Մասնաճիւղերը ձայն
եւ քուէ ունին համաձայն Կանոնագրի ընդհանուր
տրամադրութեանց :

Յօդ. 108. — Շրջանային Գործադիր Յանձնա-
խումբը իր դիւանը կը կազմէ՝ համաձայն Կանոնա-
գրի ընդհանուր տրամադրութեանց :

Յօդ. 109. — Շրջանային Գործադիր Յանձնա-
խումբի դիւանը պիտի գտնուի մէկ քաղաքի մէջ.
Խորհրդատու անդամները կարող են գտնուիլ հե-
ռաւուր տեղերու մէջ :

Յօդ. 110. — Շրջ. Գործ. Յանձնախումբի ուևէ
մէկ անդամը ուտեսափ միջոց չի ստանար Կուսակ-
ցութենէն :

Յօդ. 111. — Շրջ. Գործ. Յանձնախումբի տե-
ղական ծախսերը կը հոգան Մասնաճիւղերը՝ հա-
մաձայն Շրջանային Պատգ. Ժողովի որոշման :

Յօդ. 112. — Գործ. Յանձնախումբի անդամնե-
րը կրնան Պատգ. ընտրուիլ Մասնաճիւղերու կողմէն
Ամեր. Շրջ. Ընդհանուր Պատգ. Ժողովի համար :

Յօդ. 113. — Գործ. Յանձնախումբի ներկայա-
ցուցիչը միայն մէկ ձայն կրնաչ ներկալացնել Պատգ.
Ժողովներուն մէջ :

ԿԵԴՐ. ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ՇՐՋ. ԳՈՐԾ. ՅԱՆՁ-
ՆԱԿԱՐԱԿԵՐՈՒԻ ՓՈԽ—ՑԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԼ

Յօդ. 114. — Շրջանային Գործ. Յանձնախու-
բը իր Շրջանի Պատգ. Ժողովէն ընտրուած, Ամերի-
կայի Շրջանի Կեդր. Վարիչ Մարմնոյ չքջանային
ներկայացուցչական եւ գործադրական մարմինն է :

Յօդ. 115. — Շրջանային Գործ. Յանձնախում-
բը պարտաւոր է անսալ եւ կատարել Կեղծոնական
Վարիչ Մարմնոյ օրինական բոլոր հրահանդներն
ու որոշումները :

Յօդ. 116. — Կեդր. Վարիչ Մարմինը իրաւունք
ունի իր պարտականութեանց մէջ թերացող եւ իր
իրաւասութենէն դուրս եկող Գործ. Յանձնախում-
բը լուծել, այդ մասին ինքը պատսախանատու մը-
նալով Շրջ. Ընդհանուր Պատգ. Ժողովին, եւ Շրջ.

Պատգամաւորական ժողովին հրահանգել Շրջ. նոր Գործ. Յանձնախումբ մը ընտրելու:

Յ07. 117. — Եթէ ընտրուած Գործ. Յանձնախումբի անդամներէն մէկը հրաժարի. — պաշտօնի կը հրաւիրուի փոխ անդամներէն մին:

Յ07. 118. — Կանոնագրացին ծանր օրինազանցութեան մէջ գտնուող Գործ. Յանձնախումբի ուեէ մէկ անդամը՝ կեղը. Վարիչ Մարմինը, ի պաշտօնէ, կարող է հեռացնել եւ այդ մասին պատասխանատու մնալ՝ Ամեր. Շրջ. Պատգ. Ժողովին:

Յ07. 119. — Շրջ. Գործ. Յանձնախումբը, իր Շրջանի ներկայացուցչական եւ գործադրական մարմինը լինելով, իրաւունք ունի իր Շրջանի թարգմանը հանդիսանալու՝ կեղը. Վարիչ Մարմնի առաջ:

Յ07. 120. — Կեղը. Վարիչ Մարմինը, Շրջ. Գործ. Յանձնախումբի միջոցով, յարարելութիւն կը պահէն Շրջանացին Մասնաճիւղերու հետ:

Յ07. 121. — Շրջանացին Մասնաճիւղերը իրենց Շրջանի Գործ. Յանձնախումբի միջոցով յարարելութիւն կը պահէն կեղը. Վարիչ Մարմնի հետ:

Յ07. 122. — Ստիպողական եւ արդարացուցիչ պարագաներու տակ Վարիչ Մարմինը ուղղակի յարարելութիւն, թղթակցութիւն կարող է ունենալ Շրջանացին Մասնաճիւղի հետ, պատասխանատու մնալով Ամերիկայի Շրջանացին Պատգ. Ժողովին:

Յ07. 123. — Ստիպողական եւ արդարացուցիչ պարագային՝ Շրջանացին Մասնաճիւղերը ուղղակի յարաբերութիւն կարող են ունենալ կեղը. Վարիչ Մարմնի հետ՝ այդ մասին պատասխանատու մնալով Շրջանացին Գործ. Յանձնախումբին եւ Շրջանացին Պատգամաւորական ժողովին:

Շրջ. Գործ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Յ07. 124. — Շրջ. Գործ. Յանձնախումբը պիտի հսկէ, որ իր Շրջանի Մասնաճիւղերը կատարեն իրենց վրայ դրուած կանոնագրացին եւ Շրագային բոլոր պարտականութիւնները:

Յ07. 125. — Նա զարկ պիտի տայ իր Շրջանի կուսակցական գործերուն՝ համաձայն ընդհանուր եւ տեղական Պատգ. Ժողովներու որոշման եւ կեղը. Վարիչ Մարմնի տուած լատուկ հրահանդներով:

Յ07. 126. — Կեղը. Վարիչ Մարմնի կանխահառ գիտակցութեամբ եւ հաւանութեամբ՝ Շրջանացին Գործ. Յանձնախումբը իրաւունք ունի կուսակցութեանս ընդհանուր կանոնագրի տրամադրութիւնները գործադրել իր Շրջանի Մասնաճիւղերու եւ ընկերներու նկատմամբ:

Յ07. 127. — Շրջանի Մասնաճիւղերը իրենց նիւթական պարտականութիւնները կը կատարեն, կեղը. Վարիչ Մարմնի հանդէպ, իրենց Շրջանացին

Դործ. Յանձնախումբի միջոցով :

ՅՈՒ. 128. — Մէկ Շրջ. Գործ. Յանձնախումբ
իրաւունք ունի յարաբերութիւն պահել՝ ուրիշ քր-
չաններու Շրջ. Գործ. Յանձնախումբերու հետ:

ՅՈՒ. 129. — Մէկ Շրջանի Մասնաճիւղ իրաւունք
ունի միւս շրջաններու Մասնաճիւղերու հետ յարա-
բերելու՝ միշտ պատասխանատու մնալով իր Շրջա-
նային Գործ. Յանձնախումբին եւ Շրջ. Պատգ. Ժո-
ղովին:

ՅՈՒ. 130. — Մէկ Շրջանային Գործ. Յանձնա-
խումբ մի ուրիշ շրջանի Մասնաճիւղի հետ յարա-
բերութեան մէջ կարող է մտնել՝ պատասխանատու
մնալով այդ Շրջ. Գործ. Յանձնախումբին, կեդր.
Վարիչ Մարմնին, իր Շրջանային եւ Ամերիկայի
Շրջանի Պատգ. Ժողովին:

ՅՈՒ. 131. — Խրաբանչիւր Շրջանի Գործադիր
Յանձնախումբը իրաւունք ունի զարկ տալ Սօցիալ-
Դէմոկրատ Հնչակեան կուսակցութեան գրականու-
թեան՝ գրքեր, գրչուներ, պարբերականներ հրա-
տարակելով կեդր. Վարիչ Մարմնոյ գիտակցու-
թեամբ եւ հաւանութեամբ, երբ արդէն այդ մասին
իր Շրջանային պատգ. Ժողովը յատուկ որոշում
առած կը մինի: Այդ նպատակով եղած ծախսերը
կուսակցութեանս ընդհանուր ծախսերուն մէջ չը
պիտի մտնեն. անոնք պիտի լինին բացահիլ միջոց-
ներով:

ՅՈՒ. 132. — Շրջանային Մասնաճիւղերը պիտի
անսան եւ կատարեն իրենց Շրջանային Գործադիր

Յանձնախումբի օրինական բոլոր հրահանգներն ու
որոշումները:

ՅՈՒ. 133. — Շրջանի մէջ կազմուած նոր Մաս-
նաճիւղերը իրենց կնիքը կստանան կեդր Վարիչ
Մարմնէն, իրենց Շրջանային Գործ. Յանձնախումբի
միջոցաւ:

ՇՐՋ. ԳՈՐԾ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԵՒ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՅՈՒ. 134. — Խրաբանչիւր Շրջան իրաւունք ու-
նի իր Շրջանի ցատուկ գործիչն ունենալ՝ բացառա-
պէս կեդր. Վարիչ Մարմնի գիտակցութեամբ եւ
հաւանութեամբ:

ՅՈՒ. 135. — Տեղական գործիչները բգիւլով
Շրջ. Գործ. Յանձնախումբէն՝ իրենց գործունէու-
թեան համար պատասխանատու են այդ Մարմնին եւ
Շրջ. Պատգ. Ժողովին ու կեդր. Վարիչ Մարմնին:

ՅՈՒ. 136. — Կեդր. Վարիչ Մարմնը իրաւունք
ունի միշտ աեղական գործիչները պաշտօնազրկել,
երբ հարկ տեսնէ:

ՅՈՒ. 137. — Երբ մէկ Շրջանի տեղական գործիչ
ուրիշ շրջան անցնի, կեդր. Վարիչ Մարմնի գիտակ-
ցութեամբ եւ հաւանութեամբ, նա պիտի ենթարկուի
այդ Շրջանի Գործ. Յանձնախումբի իրաւասու-
թեանը:

Յ0Դ. 138. — Տեղական գործիչները իրենց ապ-
րուստի միջոցը կստանան Շրջանային Գործադիր
Յանձնախումբերէն :

Յ0Դ. 139. — Տեղական գործիչներու իրաւա-
սութեան վերաբերեալ գործերը՝ կախում ունին
Շրջ. Գործ. Յանձնախումբերու տուած իրաւունք-
ներէն :

Յ0Դ. 140. — Տեղական գործիչները կարող են
Մասնաճիւղերու անդամական եւ Վարչական ժո-
ղովներուն ներկայ լինիլ, խորհրդակցական ձայնով :

Յ0Դ. 141. — Տեղական գործիչները իրենց վկա-
յականը կստանան Շրջ. Գործ. Յանձնախումբէն :

Յ0Դ. 142. — Կեդր. Վարիչ Մարմինի կողմէն ու-
ղարկուած ընդհանուր գործիչները իրենց վկայա-
կանները կեդր. Վարիչ Մարմնէն ստանալով, Շրջ.
Գործադիր Յանձնախումբի իրաւասորթեան կեն-
թարկուին եւ անոնց հետ համախորհուրդ կը դոր-
ծեն :

Յ0Դ. 143. — Ընդհանուր գործիչը իրաւունք չու-
նի ինքնագլուխ տնօրինութիւններ ընել առանց
Շրջ. Գործ. Յանձնախումբի գիտակցութեան եւ
Հաւանութեան :

Յ0Դ. 144. — Ընդհանուր գործիչներու եւ Շրջ.
Գործադիր Յանձնախումբերու անհամաձայնութեան
պարագային՝ կեդր. Վարիչ Մարմինը կը միջնորդէ
եւ վերջին տնօրինութիւն կընէ :

ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Յ0Դ. 145. — «Երիտասարդ Հայաստան»ը Սո-
ցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան սեպ-
հականութիւնն է (ինչպէս նաեւ իմբրագրական գու-
քեր եւ տպագրական բոլոր գործիքները) եւ Պաշո-
նական Օրգանը նոյն Կուսակցութեան Ամերիկայի
Շողանակին : Խմբաղիրը պիտի ընտրուի Շրջանային
Պատգամաւրական Ժողովի կողմէն : —

«Երիտասարդ Հայաստան»ի Խմբաղիր կարող է
նշանակուիլ, նաեւ Շրջանի Համաձայնութեամբ
եւ կեդր. Վարիչ Մարմնի կողմէն :

Յ0Դ. 146. — «Երիտասարդ Հայաստան»ը կունե-
նայ Խմբաղրական Մարմին մը, ընտրուած կեդր.
Վարիչ Մարմնոյ կողմէ, որը կը վարէ Խմբաղրա-
կան գործերը կեդր. Վարիչ Մարմնոյ վերհսկողու-
թեան տակ :

Յ0Դ. 147. — «Երիտասարդ Հայաստան»ի ծախ-
սերը կը հոգացուին բաժանորդազներէ եւ ծախուա-
ծի հասոյթէն :

ՍՈՑԻԱԼ ԴԷՄՕԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿ





